# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2015թ. **սեպտեմբերի 17-ի** նիստի

**Ներկա էին՝ պ.գ.թ., դոց. Անուշավան եպս. Ժամկոչյան** (խորհրդի նախագահ), **դոցենտ Ա. Յ. Բալյան** (խորհրդի քարտուղար), դոցենտ **Ա. Է. Հովհաննիսյան,** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ **Ռ. Հ. Վարդանյան,** գիտ. դոկտ., պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. Ավետիսյան,** պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Լ. Ա. Սարգսյան,** ասիստենտ Վ.Վ. Խաչատրյան, փ.գ.թ. դոց. **Պ. Բարսեղյան,** պ.գ.դ. **Ս. Ս. Մկրտչյան**, Հայ եկեղ. պատմ և եկեղեց. ամբ. պատմ. գիտ. դոկտ. Ա. Ս. Սահակյան, փ.գ.թ. դոց. Գ. Ա. Սարգսյան, դսխ. **Գ. Հ. Ղուշչյան, ՈՒԽ Նախագահ Ն. Հայրապետյան, ՈՒԳԸ նախագահ Մ. Ղևոնդյան:**

*ՕՐԱԿԱՐԳ*

1. ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության հարցը:
2. - ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնական արդի գործընթացները էթնոմշակութային արժեքների պահպանման համատեքստում» գիտական թեմայի երաշխավորության և հաստատման հարցը

ԼՍԵՑԻՆ.1 – ԵՊՀ գիտական խորհրդի անդամի ընտրության հարցը: (զեկ.՝ դեկան դոց. Ա.ԵՊՍ. ԺԱՄԿՈՉՅԱՆ):

Խորհրդի նախագահ՝ դեկան դոց. Ա. եպս. Ժամկոչյանը ֆակուլտետի հայտնեց, որ ԵՊՀ կազմակերպաիրավական ձևի փոփոխությամբ պայմանավորված ձևավորվելու է նաև ԵՊՀ գիտական խորհրդի նոր կազմ: Խորհրդի նախագահին առաջարկեց «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի վարիչ պ.գ. դ. պրոֆ. Լ. Ա. Սարգսյանի թեկնածությունը՝ նշելով, որ վերջինս ունի ամբիոնի վարիչի բավականաչափ երկար՝ 8 տարվա աշխատանքային ստաժ և համապատասխանում է ԵՊՀ գիտական խորհրդի անդամին ներկայացվող պահանջներին :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. -պրոֆ. Ա. Ս. Սահակյան, պատմ. գիտ. պատմ. գիտ. դոկտ. Ս. Ս. Մկրտչյան, գիտ. թեկն դոց. Ա. Է. Հովհաննիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի վարիչ պ.գ. դ. պրոֆ. Լ. Ա. Սարգսյանին ընտրել ԵՊՀ գիտական խորհրդի անդամ:

ԼՍԵՑԻՆ 2 - ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնական արդի գործընթացները էթնոմշակութային արժեքների պահպանման համատեքստում» գիտական թեմայի երաշխավորության և հաստատման հարցը (զեկ.՝ Պ. Բարսեղյան):

Զեկուցողը խորհրդի նիստի քննարկմանը ներկայացրեց «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնական արդի գործընթացները էթնոմշակութային արժեքների պահպանման համատեքստում» գիտական թեման և նշեց, որ այն գիտական մեծ արժեք է ներկայացնում, ինչպես պատմական, այնպես էլ տեսական, արդիական և կիրառական տեսանկյուններից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պատմ. գիտ. թեկն. դոց. Ա. Եպս. Ժամկոչյան, պատմ. գիտ. դոկտ. պրոֆ. Լ. Ա. Սարգսյան, պատմ. գիտ. դոկ. Ս. Մկրտչյան, պատմ. գիտ. թեկն. դոց. Ա. Հովհաննիսյան, պատմ. գիտ. թեկն.դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ– Հաստատել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Կրոնի պատմության և տեսության» ամբիոնի «Կրոնական արդի գործընթացները էթնոմշակութային արժեքների պահպանման համատեքստում» գիտական թեման և երաշխավորել ՀՀ ԿԳՆ Գիտության Պետական Կոմիտեին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ պ.գ.թ. դոց. ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ պ.գ.թ. դոց. Ա. ԲԱԼՅԱՆ